



California's Protection & Advocacy System

Բուժօգնության հասանելիությունը  
հաշմանդամություն ունեցող անձանց համար  
Հաշմանդամություն ունեցող  
ամերիկացիների մասին օրենքի և  
Քաղաքացիական իրավունքները սահմանող  
այլ օրենքների համաձայն

---

*Մեպտեմբեր 2013թ., Հրապ. #5531.10 - Armenian*

1. Ի՞նչ է տեղի ունենում, եթե ես օգտագործում եմ անվասայլակ, քայլակ կամ հենակներ և չեմ կարողանում հասնել իմ բժշկի գրասենյակին:
2. Ի՞նչպիսին է բժշկական սարքավորումների և հետազոտության սենյակների ֆիզիկական մատչելիությունը:
3. Արդյո՞ք ես կարող եմ ինձ ուղեկցող կենդանուն բերել ինձ հետ բժշկի նշանակած հանդիպմանը:
4. Ես ի՞նչ եմ, ի՞նչպես պետք է ինձ սպասարկող բուժհաստատությունները հաղորդակցվեն ինձ հետ:
5. Ես կույր եմ կամ ունեմ վատ տեսողություն, ի՞նչպես կարող եմ ստանալ տեղեկատվություն ինձ սպասարկող բուժհաստատություններից:
6. Ի՞նչ է տեղի ունենում, եթե ես ունեմ հոգեկան առողջության կամ այլ տեսակի հաշմանդամություն, կարո՞ղ եմ խնդրել փոփոխություններ,

որոնք կօգնեն ինձ օգտվել ինձ սպասարկող  
բուժհաստատություններից:

7. Հաշմանդամության հիման վրա խտրականության ինչպիսի՞  
օրինակներ կան, որոնք կարող են խախտել ADA օրենքը կամ  
Բաժին 504-ը:
8. Ի՞նչ պետք է ես անեմ, եթե իմ հաշմանդամության հետևանքով  
դժվարանում եմ օգտվել ինձ սպասարկող բուժհաստատությունների  
կամ բժշկական ապահովագրության ծառայություններից:
9. Ո՞րտեղ կարող եմ բողոք ներկայացնել, եթե չեմ կարողանում  
համաձայնության գալ ինձ սպասարկող բուժհաստատության կամ  
բժշկական ապահովագրության ծրագրի հետ:
10. Ո՞րտեղ կարող եմ ստանալ մանրամասն տեղեկատվություն կամ  
օգնություն, եթե ունենամ բուժօգնությունից օգտվելու օգնության  
կարիք:

## ՆԱԽԱԲԱՆ

Այս բրոշյուրում խոսվում է հաշմանդամություն ունեցող անձանց  
բուժօգնությունից օգտվելու իրավունքների մասին: Բուժօգնությունից  
օգտվելը ներառում է հաստատությունների, ծառայությունների և  
տեղեկատվության տրամադրումը բժիշկների գրասենյակների, այլ  
բժշկական ծառայություններ առաջարկողների և ապահովագրական  
ծրագրերի կողմից: Շատ կալիֆոռնիացիների համար բժշկական  
ծառայությունները մատուցվում են որևէ պետական հաստատության,  
օրինակ՝ վարչաշրջանի կողմից, կամ Կառավարվող բուժօգնության  
միջոցով՝ բուժսպասարկողների ցանց, որը կառավարվում է մեկ  
գլխավոր ընկերության կամ գործակալության կողմից: Կառավարվող  
բուժօգնության կազմակերպությունները Medi-Cal-ի  
ծառայությունները մատուցում են Նահանգի և/կամ վարչաշրջանի  
ղեկավարության հետ ունեցած պայմանագրի շրջանակում: Բոլոր  
բուժհաստատություններին արգելվում է խտրականություն կիրառել  
հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ, նրանք պետք է  
բուժօգնությունը հասանելի դարձնեն տարբեր եղանակներով:

Ձեր իրավունքները պաշտպանող հիմնական դաշնային օրենքներն են՝ **Հաշմանդամություն ունեցող ամերիկացիների մասին օրենքը (անգլ.՝ Americans with Disabilities Act, այսուհետ՝ ADA)** և

**Աշխատունակության վերականգնման օրենքի բաժին 504-ը (անգլ.՝ Section 504 of the Rehabilitation Act, այսուհետ՝ Section 504):**

Մասնավոր հիվանդանոցների կամ բուժկետերի ծառայությունները կարգավորվում են ADA օրենքի բաժին III-ով, քանի որ նրանք «հանրային օգտագործման տարածքներ են»: Պետական մարմինների, օրինակ՝ վարչաշրջանների կողմից ղեկավարվող բժշկական հաստատությունների կամ պետական այլ հիվանդանոցների, կլինիկաների և բժշկական գրասենյակների ծառայությունները կարգավորվում են ADA օրենքի բաժին II-ով, քանի որ նրանք պետական հաստատություններ են: Բաժին 504-ը կարգավորում է դաշնային ֆինանսավորում ստացող բժշկական հաստատությունների ծառայությունների մատուցումը, ինչպիսիք են Medicare-ը կամ Medi-Cal-ը:<sup>i</sup> Նմանատիպ դրույթներ կան նաև նահանգային օրենքներում:<sup>ii</sup>

## **Ընդհանուր դրույթներ**

ADA օրենքի II և III բաժինները և Բաժին 504-ը՝ երկուսն էլ պահանջում են, որպեսզի բուժհաստատությունները հաշմանդամություն ունեցող անձանց համար ապահովեն հետևյալը.

- **Լիարժեք և հավասար պայմաններ** թե՛ իրենց հաստատություններից, թե՛ ծառայություններից օգտվելու համար,
- **Ողջամիտ փոփոխությունների** կատարում իրենց քաղաքականություններում, գործելակերպում և ընթացակարգերում, եթե անհրաժեշտ լինի, որպեսզի բուժօգնության ծառայությունները հասանելի լինեն, և
- **Արդյունավետ հաղորդակցում, այդ թվում՝ հաղորդակցմանն օժանդակող սարքեր ու ծառայություններ, ինչպիսիք են օրինակ սուրդոթարգմանիչների կամ այլընտրանքային ձևաչափով գրավոր նյութերի տրամադրումը<sup>iii</sup>**

Մակայն հաշմանդամություն ունեցող անձին հարմարություն տրամադրելուց հրաժարվելը չի համարվում ADA օրենքի խախտում, եթե շենքի կամ ծառայության փոփոխումը բուժհաստատության համար կնշանակի «անհարկի դժվարություն»:<sup>iv</sup> Բուժհաստատությունը կարող է գնահատել, թե արդյոք անհրաժեշտ կամ պահանջվող ձևափոխումը ողջամիտ է և սահմանել, թե արդյոք դա կլինի ծրագրի հիմնովին ձևափոխում, որը կկանգնեցնի զգալի դժվարության կամ ծախսերի առաջ:

**Ի՞նչ է տեղի ունենում, եթե ես օգտագործում եմ անվասայլակ, քայլակ կամ հենակներ և չեմ կարողանում հասնել իմ բժշկի գրասենյակին:**

Եթե այն շենքը կամ տարածքը, որից փորձում եք օգտվել, նորակառույց է կամ ձևափոխված է, այն պետք է ապահովի դաշնային և նահանգային օրենքներով սահմանվող ֆիզիկական մատչելիության պահանջները: Մատչելիության պահանջները մանրամասն նկարագրված են օրենքում և կանոնակարգերում:<sup>v</sup> Ըստ այդ պահանջների տարածքը պետք է ունենա մատչելի երթևեկելի մասեր, վերելակներ, թեքահարթակներ, հեշտ բացվող դռներ, լույսի հասանելի անջատիչներ, մատչելի լոգասենյակներ, մատչելի կայանատեղի և այնպիսի նշաններ, որոնցից կարող են օգտվել կույր կամ վատ տեսողություն ունեցող անձինք:<sup>vi</sup>

1990 թվականից չձևափոխված շենքերը պետք է համապատասխանեն գոյություն ունեցող շենքերի մատչելիության պահանջներին: Պետական բուժհաստատությունը (ըստ Բաժին II-ի) պետք է ապահովի իր ծրագրի ամբողջական մատչելիությունը: Դա ներառում է շենքերի ֆիզիկական մատչելիության ապահովումը, ճարտարապետական խոչընդոտող պատնեշների հեռացումը կամ ծառայությունների մատուցումը ժամանակավորապես կամ մշտական որևէ մատչելի տարածք տեղափոխելը: Մասնավոր բուժհաստատությունները (ըստ Բաժին III-ի) պետք է հեռացնեն ճարտարապետական խոչընդոտող պատնեշները, եթե նման հեռացումը հեշտ իրագործելի է կամ կարող է հեշտությամբ իրականացվել՝ առանց դժվարության կամ ծախսերի: Հակառակ դեպքում նրանք պետք է կատարեն այլ փոփոխություններ, որոնք պետք է լինեն կրկին հեշտ իրագործելի:<sup>vii</sup> Օրինակ երթևեկելի մասերում պատնեշներ և խոչընդոտներ չունենալը կամ բժշկի հետ հանդիպումը նշանակել որևէ այլ մատչելի վայրում:

## **Ի՞նչ պիսին է բժշկական սարքավորումների և հետազոտության սենյակների ֆիզիկական մատչելիությունը:**

ԱՄՆ Արդարադատության վարչության (անգլ.՝ U.S. Department of Justice, այսուհետ՝ DOJ) ուղեցույցներում նշվում է, որ ընդհանուր առմամբ **ընդունելի չէ**, որ բուժհաստատությունը մերժի բուժումը ոչ մատչելի հետազոտական սեղանի, ոչ մատչելի բժշկական սարքի կամ այն մտահոգության պատճառով, որ անձնակազմը կարող է վնասվածք ստանալ, եթե օգնի փոխադրել շարժունակության հաշմանդամություն ունեցող անձին: DOJ-ը պահանջում է, որ բուժհաստատությունները տրամադրեն մատչելի սարքավորումներ և օգտագործեն վերելակ կամ վերապատրաստված անձնակազմ, որոնք անհրաժեշտ են բժշկական հետազոտությունների ու ստուգումների մատչելիության հավասար պայմաններ ապահովելու համար:<sup>viii</sup>

## **Արդյո՞ք ես կարող եմ ինձ ուղեկցող կենդանուն բերել ինձ հետ բժշկի նշանակած հանդիպմանը:**

Այո: ADA օրենքը պահանջում է, որ և՛ պետական, և՛ մասնավոր բուժհաստատությունները թույլ տան հաշմանդամություն ունեցող անձին գալ ուղեկցող կենդանու ուղեկցությամբ: Հաստատությունները կարող են սահմանափակ հարցումներ անել ուղեկցող կենդանու անհրաժեշտության վերաբերյալ, սակայն կարող են չհարցնել անձի հաշմանդամության մասին: Սակայն ուղեկցող կենդանիների նկատմամբ կան որոշակի սահմանափակումներ: Կենդանին պետք է լինի շուն կամ փոքր ձի, իսկ մյուս կենդանիներն ընդհանուր առմամբ չեն թույլատրվում: Կենդանին պետք է լինի անհատականորեն վարժեցրած՝ անմիջապես տվյալ հաշմանդամություն ունեցող անձին առնչվող աշխատանքը կամ առաջադրանքները կատարելու համար:

Օրինակ՝ խլություն ունեցող անձը կարող է ունենալ շուն, որը նրան կզգուշացնի ձայների համար, շատ մարդիկ, ովքեր կույր են, շներին օգտագործում են կողմնորոշման հարցում իրենց օգնելու համար, իսկ շարժունակության հաշմանդամություն ունեցող անձինք կարող են ունենալ շուն, որը նրանց կտա որոշ իրեր կամ կիրի անվասայլակը: Էպիլեպսիա կամ խուճապի հետ կապված հիվանդություն ունեցող անձը կարող է ունենալ շուն, որը նրան կնախազգուշացնի գալիք նոպայի մասին: Սակայն, ADA օրենքի համաձայն, կենդանու օգտագործումը

հարմարավետության, թերապևտիկ կամ հոգեբանական աջակցության նպատակով չի համապատասխանում ուղեկցող կենդանու նշանակությանը և կթույլատրվի միայն որպես ողջամիտ հարմարություն սահմանափակ հանգամանքներում:<sup>ix</sup>

**Ես խուլ եմ, ի՞նչպես պետք է ինձ սպասարկող բուժհաստատությունները հաղորդակցվեն ինձ հետ:**

Ըստ ADA-ի՝ բուժհաստատությունները խլություն ունեցող կամ դժվար լսողությամբ հիվանդների, ընտանիքի անդամների և այցելուների համար պետք է ապահովեն **արդյունավետ հաղորդակցում օժանդակ սարքերի ու ծառայությունների միջոցով**: Քանի որ խլություն կամ դժվար լսողություն ունեցող մարդիկ օգտագործում են հաղորդակցման տարբեր ձևեր, բուժհաստատության տրամադրած մեթոդը նույնպես տարբեր կլինի՝ կախված տվյալ անձի ունակություններից, նրա նախընտրած հաղորդակցման ձևից և պահանջվող հաղորդակցման բարդությունից և բնույթից:<sup>x</sup> Բուժհաստատությունը պետք է առաջնայնությունը տա հաշմանդամություն ունեցող անձի կողմից պահանջվող հաղորդակցման մեթոդին: Օժանդակ սարքերն ու ծառայություններն են օրինակ որակավորում ունեցող սուրդոթարգմանիչները, լսողական սարքերը, արձանագրողները, գրավոր նյութերը, հեռուստացույցի ենթագրերի վերծանիչները, հատուկ խուլ անձանց համար նախատեսված ենթագրերի վերծանիչները և ենթագրերն իրական ժամանակում:<sup>xi</sup>

Արդյունավետ հաղորդակցման օրինակ կարող է լինել հետևյալը.

- Գրելով հաղորդակցումը կամ որևէ իր հիվանդանոցի նվերների խանութում ցույց տալը կամ ցույց տալը ի պատասխան այցելուի կողմից հիվանդի հիվանդասենյակի համարի հարցմանը: Սակայն գրելով հաղորդակցումը կարող է ոչ այդքան արդյունավետ լինել հիվանդի համար, եթե հաղորդակցումը տեղի է ունենում բուժսպասարկողի և հիվանդի միջև
- Գրավոր ձևերը կամ տեղեկատվական թերթիկները այն իրավիճակների համար են, երբ շատ մեծ շփման կարիք չկա, օրինակ՝ հաշիվների կամ ապահովագրական

## Էջ 7` 14-ից

տեղեկատվության կամ բժշկական պատմության ձևերի տրամադրումը

- Որակյալ սուրդոթարգմանչի կամ այլ թարգմանչի տրամադրումը, որպեսզի բժիշկը և հիվանդը կամ մանկաբույժն ու անչափահաս երեխայի ծնողները/խնամակալը կարողանան քննարկել աշխտանիշները կամ բուժումը, կամ խմբային թերապիայի համար <sup>xii</sup> և
- Որևէ բուժգործողությունից հետո ինքնուրույն խնամքի վերաբերյալ տեղեկատվության սուրդոթարգմանության տրամադրումը DVD կրիչով կամ համացանցային տեսանյութի ձևաչափով:

Ձեզ սպասարկող բուժհաստատությունը չի կարող գումար գանձել ձեզնից սուրդոթարգմանչի ծառայություններ տրամադրելու համար:<sup>xiii</sup> It is inappropriate to ask a family member or other companion to interpret for a deaf or hard of hearing patient because the situation might be private, too emotional, or the family member might not have the appropriate level of communication skills for the situation. Բացի այդ, կարևոր է նաև ձեզ սպասարկող բուժհաստատությանը հեռախոսով զանգահարելը: Ձեր բուժսպասարկողը պետք է տրամադրի հեռախոսակապ TTY-ով կամ տեսազանգի հնարավորություն կամ այլ կոմունտացիոն ծառայություն: Որոշակի պայմաններում կարող է լրացուցիչ պահանջվել տրամադրել տեսողական ազդանշաններ և հանրային հեռախոսակապից օգտվելու հնարավորություն:<sup>xiv</sup> Հետազոտական սենյակում ուղղակի թարթող լույսը հագուստները փոխող հիվանդին զգուշորեն կտեղեկացնի, որ բժիշկը մոտենում է սենյակ մտնելու համար:

**Ես կույր եմ կամ ունեմ վատ տեսողություն, ի՞նչպես կարող եմ ստանալ տեղեկատվություն ինձ սպասարկող բուժհաստատություններից:**

Ըստ ADA-ի՝ բուժհաստատությունները կույր կամ վատ տեսողությամբ հիվանդների, ընտանիքի անդամների և այցելուների համար պետք է ապահովեն արդյունավետ հաղորդակցում օժանդակ սարքերի ու ծառայությունների միջոցով: Այդպիսի ծառայություններ կարող են լինել՝

## Էջ 8՝ 14-ից

հատուկ կարդալու սարքերը, ձայնագրված տեքստերը, Բրայլյան գրով նյութերը, սարքերի գնումը կամ ձևափոխումը կամ տեղեկատվության փոխանցման այլ արդյունավետ միջոցներ:<sup>xv</sup> Ընդհանուր առմամբ տպագիր տեքստով ողջ տեղեկատվությունը, այդ թվում՝ առողջության պահպանման վերաբերյալ ընդհանուր ուղղորդումները, կողմնակի ազդեցությունների մասին տեղեկատվությունը, հաշիվները և բժշկի այցերի հիշեցումները, պետք է փոխանցվեն արդյունավետ կերպով: Օժանդակ սարքերի ու ծառայությունների այլ օրինակներ են.

- Օգնություն ընդունման և համաձայնության ձևերը կարդալու և լրացնելու կամ դուրսգրման տեղեկատվությունը, դեղորայքի անուններն ու չափաբաժինները կարդալու համար
- Տեքստային նյութերի տրամադրում մատչելի էլեկտրոնային ձևաչափով
- Փաստաթղթերի տրամադրում Բրայլյան գրով կամ ձայնագրված տարբերակով
- Բրայլյան գրով նյութի տրամադրում հեռատիպով այնպիսի հիվանդի, ով խուլ է և կույր կամ
- Բժշկական ապահովագրության ծրագրերի կայքէջերի մատչելիության ապահովում:<sup>xvi</sup>

Նշում. բուժհաստատությունը չի կարող կույր անձից պահանջել, որ նա իր հետ բերի որևէ մեկին, ով կթարգմանի կամ կօգնի հաղորդակցմանը, և չի կարող հենվել թարգմանող կամ հաղորդակցմանն օժանդակող ուղեկցորդի վրա:

**Ի՞նչ է տեղի ունենում, եթե ես ունեմ հոգեկան առողջության կամ այլ տեսակի հաշմանդամություն, կարո՞ղ եմ խնդրել փոփոխություններ, որոնք կօգնեն ինձ օգտվել ինձ սպասարկող բուժհաստատություններից:**

Այո: ADA օրենքն ապահովում է պաշտպանություն խտրականության դեմ բոլոր տեսակի հաշմանդամություններով անձանց, այդ թվում՝ ֆիզիկական, կոգնիտիվ, հաղորդակցման և հոգեկան առողջության հաշմանդամություն ունեցող անձանց համար:



Բուժհաստատություններն, անհրաժեշտության դեպքում, պետք է կատարեն «նոզամիտ փոփոխություններ իրենց քաղաքականություններում, գործելակերպերում և ընթացակարգերում»՝ խուսափելու հաշմանդամության հիման վրա խտրականություն ցուցաբերելուց, եթե բուժհաստատությունը չկարողանա ցույց տալ, որ այդ փոփոխությունը կատարելը «հիմնովին կփոխի ծառայության, ծրագրի կամ գործունեության բնույթը»: Դա նշանակում է, որ կազմակերպությունը պետք է փոփոխի իր բիզնես-գործունեության ձևը, որպեսզի շատ իրավիճակներում հարմարվի հաշմանդամություն ունեցող անձանց, օրինակ՝

- Հատկացնի լրացուցիչ ժամանակ՝ կոգնիտիվ հաշմանդամություն ունեցող և հավանաբար դժվար ընկալող անձին բուժգործողությունը բացատրելու համար,
- Նշանակի այցելությունն որևէ կոնկրետ ժամանակում, որպեսզի հարմարվի տազնապային խնդիրներ ունեցող անձին, ով դժվարանում է սպասել մարդկանցով լի սպասասարահում կամ
- Օգնի կույր հիվանդին, որպեսզի նա կարողանա ընտրի սնունդ կլինիկայի ճաշարանում:

### **Հաշմանդամության հիման վրա խտրականության ինչպիսի՞ օրինակներ կան, որոնք կարող են խախտել ADA օրենքը:**

Խտրականության օրինակներ կարող են լինել հետևյալ դեպքերը.

- **Ստիպել ձեզ սպասել ավելի երկար** հետազոտություն անցնելու համար, քանի որ կա հետազոտության միայն մեկ մասշտիբ սենյակ,
- **Ստիպել ձեզ բերել ձեզ հետ ուղեկցողի** կամ ընկերոջ, ով բուժհաստատությունում կօգնի ձեզ բարձրանալ, հասկանալ կամ կթարգմանի ձեզ համար (եթե դա ձեր ցանկությունը չէ),
- **Հրաժարվել սպասարկել ձեզ**, քանի որ հետազոտությունը կարող է ավելի երկար տևել ձեր հաշմանդամության պատճառով,

- **Գանձել լրացուցիչ գումար՝** սուրդոթարգմանիչ տրամադրելու համար, որպեսզի ապահովվի արդյունավետ հաղորդակցում,
- **Տրամադրել այցերի սահմանափակ ամսաթվեր կամ ժամեր անձի հաշմանդամության պատճառով,**
- **Հրաժարվել արդյունավետ հաղորդակցման օժանդակում տրամադրելուց,** օրինակ ձեր փաստաթղթերն այլընտրանքային ձևաչափով կամ սուրդոթարգմանիչ տրամադրելուց, երբ բողոքարկում եք բուժումը թույլատրող բժշկական ապահովագրության ծրագրի մերժումը, կամ երբ ներկայացնում եք բողոք կամ դժգոհություն բժշկական ապահովագրության որևէ ծրագրի համար, կամ
- **Հրաժարվել տեղեկատվություն կամ օժանդակություն տրամադրել** ապահովագրական ծրագրի այն անդամներին, ովքեր իրենց հանդիպումների համար նշել են սուրդոթարգմանչի անհրաժեշտության մասին կամ այնպիսի ցանցային բուժհաստատության անհրաժեշտության մասին, որն ունի մատչելի հետազոտական սարքավորումներ:

**Ի՞նչ պետք է ես անեմ, եթե իմ հաշմանդամության հետևանքով դժվարանում եմ օգտվել ինձ սպասարկող բուժհաստատությունների կամ բժշկական ապահովագրության ծրագրից:**

Եթե դուք ունեք խնդիրներ հարմարությունների մատչելիության, տրամադրման կամ օժանդակ սարքերի ու ծառայությունների տրամադրման հետ (կամ բախվում եք խտրականության ցանկացած այլ ձևի), դուք պետք է սկսեք խոսել անմիջապես ձեր բուժհաստատության և/կամ բժշկական ապահովագրության ծրագրի հետ: Բացի այդ, պետական բուժհաստատությունները և խոշոր մասնավոր կազմակերպություններն ու ապահովագրական ծրագրերը պետք է ունենան ADA-ի կամ Բաժին 504-ի գծով համակարգող, ով պատասխանատու կլինի օրենքի հետ համապատասխանությունն ապահովելու և հաճախորդների բողոքներին արձագանքելու համար: Եթե դուք չեք կարողանում հարցը լուծել բուժհաստատության կամ բժշկական ապահովագրության ծրագրի հետ, կարող եք զանգահարել

Էջ 11` 14-ից

կամ ներկայացնել բողոք տվյալ կազմակերպության ADA-ի գծով համակարգողին: Կապ հաստատելու և բողոք ներկայացնելու կարգը պետք է հրապարակված լինի տվյալ ապահովագրական ծրագրի կայքէջում, ներկայացվի ձեզ տրամադրվող նյութերում կամ ապահովվի անդամների սպասարկման ծառայություններին զանգահարելով:

**Ո՞րտեղ կարող եմ բողոք ներկայացնել, եթե չեմ կարողանում համաձայնության գալ ինձ սպասարկող բուժհաստատության կամ բժշկական ապահովագրության ծրագրի հետ:**

Եթե դուք անկարող եք լուծել ձեր խնդիրը պետական կամ մասնավոր բուժհաստատության հետ կամ տվյալ բուժհաստատությունում աշխատող Բաժին 504-ի կամ ADA-ի գծով համակարգողի հետ, դուք կարող եք ներկայացնել բողոք նահանգային ու դաշնային տարբեր գործակալություններին, որոնք պատասխանատու են ADA օրենքը և Բաժին 504-ը կիրառելու համար: Այդ կազմակերպություններն են.

U.S. Department of Health and Human Services  
Office of Civil Rights (OCR)  
90 - 7<sup>th</sup> Street, Suite 4-100  
San Francisco, CA 94103  
Telephone: (415) 437-8310  
TDD: (415) 437-8311  
Fax: (415) 437-8329  
[www.hhs.gov/ocr/civilrights/complaints](http://www.hhs.gov/ocr/civilrights/complaints)

United States Department of Justice (DOJ)  
950 Pennsylvania Avenue, NW  
Washington, DC 20530  
Disability Rights Section: (202)514-4713  
E-mail: [askDOJ@usdoj.gov](mailto:askDOJ@usdoj.gov)

California Department of Social Services (CDSS)  
Civil Rights Bureau (CRB)  
744 P Street, M.S. 15-70  
Sacramento, CA. 95814  
Or call collect at (916)654-2107  
E-mail: [crb@dss.ca.gov](mailto:crb@dss.ca.gov)  
<http://www.cdss.ca.gov/inforesources/Civil-Rights>

Էջ 12` 14-ից

Բացի այդ, **Կալիֆորնիայի կառավարվող բուժօգնության վարչությունը** պատասխանատու է կառավարվող բուժօգնության ծրագրերը կարգավորելու համար: Եթե դուք ունեք բողոք որևէ ծառայության կամ բուժման վերաբերյալ, կարող եք ներկայացնել բողոք, դիմել Անկախ բժշկական հետազոտություն (անգլ. Independent Medical Review, IMR) անցկացնելու համար կամ ներկայացրեք դիմում անկողմնակալ լուսմների համար (եթե խոսքը Medi-Cal-ի մասին է): Ձեր իրավունքների և բողոքներ ներկայացնելու մասին մանրամասն տեղեկությունների համար այցելեք՝

California Department of Managed Care

<http://www.dnhc.ca.gov/>.

Դուք հնարավոր է ունենաք ընդամենը **180 օր խտրականությունը կիրառելու օրվանից, որպեսզի ներկայացնեք բողոք** նահանգային կամ դաշնային համապատասխան գործակալությանը: Դուք հնարավոր է կարողանաք ներկայացնել դատական հայց բուժհաստատության դեմ, սակայն պետք է մանրամասն տեղեկատվության համար խորհրդակցեք փաստաբանի հետ:

**Ո՞րտեղ կարող եմ ստանալ մանրամասն տեղեկատվություն կամ օգնություն, եթե ունենամ բուժօգնությունից օգտվելու օգնության կարիք:**

Disability Rights California

[www.disabilityrightsca.org](http://www.disabilityrightsca.org)

1-800-776-5746

Disability Rights Education & Defense Fund

[www.dredf.org](http://www.dredf.org)

510-644-2555

*Կալիֆորնիայում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության կազմակերպությունը ֆինանսավորվում է տարբեր աղբյուրներից, հովանավորների ամբողջական ցանկը տե՛ս այստեղ.*

<http://www.disabilityrightsca.org/>

[Documents/ListofGrantsAndContracts.html](http://www.disabilityrightsca.org/Documents/ListofGrantsAndContracts.html):

ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ

- i Cal. Gov't. Code § 11135, ADA - Շարժունակության հաշմանդամություն ունեցող անձանց բուժօգնության տրամադրում (հուլիս 2010թ.), DOJ, [http://www.ada.gov/medicare\\_mobility\\_ta/medicare\\_ta.htm](http://www.ada.gov/medicare_mobility_ta/medicare_ta.htm)
- ii Cal.Civ.Code § 51 (West):
- iii 28 C.F.R. §§ 35.160(2) & 35.104:
- iv Միայն Բաժին III-ի կազմակերպություններին վերաբերող իրավական ստանդարտների համար տե՛ս առաջին հարցը վերևում, սակայն բուժհաստատությունների մեծ մասի ծառայությունները կարգավորվում են նաև Բաժին Title II-ով և/կամ Բաժին 504-ով:
- v 28 C.F.R. § 35.151 (Բաժին II); 28 C.F.R. մաս 36, ենթամաս D (Բաժին III): Կանոնակարգերը հասանելի են հետևյալ հղումով՝ <http://www.ada.gov/reg2.html> և <http://www.ada.gov/reg3a.html>;  
Cal.Gov't.Code §§ 4450-ից սկսած:
- vi 2010թ. մատչելի նախագծերի չափանիշներ ըստ ADA օրենքի, ADA, [http://www.ada.gov/2010ADASTandards\\_index.htm](http://www.ada.gov/2010ADASTandards_index.htm):
- vii *Supra*, Էջատակի ծանուցում 1:
- viii *Id.*
- ix ADA-ով սահմանվող բուժօգնության տրամադրում Շարժունակության հաշմանդամություն ունեցող անձանց համար, Համառոտ նկարագիր և ընդհանուր պահանջներ. Ծառայություններ և հաստատություններ: *Տե՛ս Supra*, Էջատակի ծանուցում 5:
- x ADA-ի գործարար հրապարակում. Հաղորդակցում խուլ և դժվար լսողություն ունեցող մարդկանց հետ հիվանդանոցային պայմաններում (հոկտեմբեր 2003թ.), DOJ, <https://www.ada.gov/hospcombr.htm>
- xi *Supra*, Էջատակի ծանուցում 4:
- xii *Supra*, Էջատակի ծանուցում 10:
- xiii 28 C.F.R. 36.301(c): Բուժհաստատությունը պարտավոր չէ տրամադրել օժանդակ սարք կամ ծառայություններ, եթե դա նրա ողջ բիզնեսի համար կնշանակի անհարկի բեռ: Անգամ եթե որևէ հիվանդի համար ծախսը կարող է լինել ավելին, քան որևէ առանձին հիվանդի համար փոխհատուցումը, բուժհաստատությունը պետք է այդ ծախսերը դիտարկի որպես տարեկան վերադիր գործառնական ծախսերի մի մաս: Հարց ու պատասխան Բուժհաստատությունների համար, Խուլերի ազգային ասոցիացիա, <http://www.nad.org/issues/health-care/providers/questions-and-answers>:
- xiv *Supra*, Էջատակի ծանուցում 10:

<sup>xv</sup> ADA-ի ստուգաթերթիկ. Բուժհաստատություններ և ծառայությունների մատակարարներ. Ծառայություններից ու բուժհաստատություններից օգտվելու հնարավորության տրամադրում կույր, կույր և խուլ կամ վատ տեսողությամբ հիվանդներին, Կույրերի ասոցիացիա՝

<http://www.afb.org/section.aspx?FolderID=3&SectionID=3&TopicID=32&DocumentID=529>:

<sup>xvi</sup> *Supra*, Էջատակի ծանուցում 3:

---

Մենք ցանկանում եք լսել ձեր կարծիքը: Խնդրում ենք պատասխանել մեր հրապարակումների մասին հետևյալ հարցման հարցերին և տեղեկացնել մեզ, թե ինչպես ենք մենք աշխատում: [\[Անցնել հարցումը\]](#)

Իրավաբանական օգնություն ստանալու համար զանգահարել 800-776-5746 հեռախոսահամարով կամ լրացնել [օգնության դիմումի ձևը](#): Մյուս բոլոր հարցերով զանգահարել 916-504-5800 (Հյուսիսային Կալիֆորնիա), 213-213-8000 (Հարավային Կալիֆորնիա) հեռախոսահամարներով:

*Կալիֆորնիայում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության կազմակերպությունը ֆինանսավորվում է տարբեր աղբյուրներից, հովանավորների ամբողջական ցանկը տե՛ս այստեղ.*

<http://www.disabilityrightsca.org/Documents/ListofGrantsAndContracts.html>: